ապահովման. «Զամենափարթամ գիւղաքաղաքն Ջուղայու» (էջ 89), «զցրտասառոյց եղանակս ձմերան» (էջ 98), «անողորմ և մարդադէմ գազանացն այնոցիկ» (էջ 103), «օդապարիկ և քաջազօրեղ և բարձրապարանոց երիվարին» (էջ 207) և այլն:

Բնանկարները Դավրիժեցու պատմագրքի գեղարվեստականությունն ապահովող տարրերից են: Դա նկատվել և գնահատվել է ուսումնասիրողների կողմից. «Առաքել պատմիչը,– գրել է Հենրիկ Բախչինյանը,– դրսևորել է նաև գեղեցիկ բնապատկերներ ստեղծելու իր վարպետությունը՝ հոմանիշների բարդումներով նկարագրելով հայրենի օդն ու ջուրը»:[22] Բացի բնության գեղեցիկ ու պատկերավոր նկարագրություններից, Դավրիժեցին վարպետ գունավորումներով ու տիպական մանրամասնություններով է պատկերել նաև բնական աղետները, որոնցում բնանկարը երևում է շարժման ու փոփոխությունների մեջ: «Դավրիժեցին... նաև բնական արհավիրքների բնանկարիչ է. այդ են վկայում նաև Սյունյաց Մեծ անապատի փլուզման (1658), Թավրիզի (1641) ու Վանի (1648) երկրաշարժերի նկարագրությունները»:[23]

Դավրիժեցին փոքրիկ, բայց տպավորիչ ձևերով է պատկերում նաև բնության եղանակներն ու դրանց յուրահատկությունները, ինչպես՝ «սաստկասառոյց և դառնաշունչ ցրտոյ ձմերան» (էջ 82), «ի հասանել քաղցրաշունչ օդոյ գարնայնոյ» (էջ 82) և այլն:

Եվ վերջապես, գեղարվեստականությունն անհնար է պատկերացնել առանց ***փոխաբերության***՝«զանհուն գետն տեսանէին իբրև զծով՝ որ խեղդէր, և յետուստ՝ զսուրն Պարսից, որ սպանանէր» (էջ 80), ***այլաբանության և չափազանցության***՝ «լալ և կոծ արանց և կանանց ընդ իրեարս խառնեալ յերկինս հասանէր» (էջ 153) և այլն: Դավրիժեցին գիտե ըստ պատշաճի օգտվել պատկերավորման այս միջոցներից, թեպետ հաճախակի չի անում դա:

---

[22] ***Հենրիկ Բախչինյան,*** XVII-XVIII դարերի հայ գրականությունը, էջ 122:

[23] Նույն տեղում, էջ 123: